Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1690 hny

1174

٤٤٦

1239

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ

ԿԱՄ

ԲՆԵՐ ՀԱՅՈՑԵՍՏԵՐ

Քառասն Ա. եւ Բ.

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐ ԵՒ ԲԱՆԵՍՈՒՆՔ ԾԱՌԱՅ
ՈՏՆԱՓՈՐՆԵՐ

ԿԱՄ

Բոլսոյ Պատրիարքութիւն ընդհանուր Ազգային
Երգոց սիրելոյ յուսալոյ տարեգրքի
որոշ ցիկլերգրքի տարեգրքի Ազգային
Կոչմնաւոր Սուրբ Հոգոյ։

ՊԱՏՇԱՒՈՒՆ ՏՊԱՐՈՒԹԻՒՆ

Ի ԼՈՅՍ ՀԱՆԵՑԱՅԻՆ

ԳՐԱՀԱՏԱՐ ՏՊԱՐԱՆ Դ. ԴԱՅԱՆԻՆՑԻ

ՏՊԱՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԻՒՍԷՆՏԻՍԻՆ

1867

ՑԱՆԿ Բ. ՄԱՍԻՆ

Աղջիկ երեսը իս դարձուր 94
Արիմնցիր ո՛ Հայ, նոր արշալուսով 58
Արկածք Հայոց ժամանակին ընդ անիւ 23
Բարձրացո՛ Տէր 'ի յերկրի 71
Գիշեր ցորեկ կը հառաչեմ 92
Դարանամուտ կամ վաղուց ես 14
Դու նոր հայրենիք դեռ նոր աղգութիւն 19
Դուք մէջէն ես քովէն 53
Եկաւ ժամանակ բարեկամ բաղդին 81
Եղբայր, մինչև երբ այսպէս լուռ 84
Երգ սիրոյ երգ հայրենի 78
Էր դու այսպէս, ո՛ սեաւ գիշեր 40
Թէ Հայկազանց ոսկի դարուն 51
Թռած Մասեաց մառախլապատ 65
Ամ է Հայեր արիք ձեր բաղդին 28
Ինչք ղուարթուն՝ և 'ի ձեր թեւս ապաստան 6
Կռունկ ոնաստի կուգաս 1
Հայաստան քաղցր իմ Հայաստան 36
Համա ու սէնա օլ խիւտայի գատիլէ 72
Հովիտ ծածկեալ 'ի ծոց լերանց 75
Մինչ ծովամաց կան 'ի խշտիս արիւնն սլաք 46
Շան ու վէրքերթիլէ հէր ան 91
Ո՞ գատերև յեցեալ Նոճեայս 'ի ստորոտ 21
Ով մեծասքանչ դու լեղու 25
Որդիք Հայկայ, որդիք փառաց 52
Չե՞ն օրերս մեզ օր խնդութեան 51
Պիր թապըմ սատէ եիւրէք մուասուն 71
Սա տխուր վիճակ տարաբաղդ ազգիս 12
Տանն Օսմանեան արև պայծառ 69
Տարի մ՝ալ անցաւ գնաց սահեցաւ 17
Փարատեցաւ երինից կապոյտ 77
'Ի քեզ անկայ Հայաստան 62
Օ՛ն մեր նախնի դարուց կարդամք հրաւէր 9

ԵՐԳ ՌԱՄԿԱԿԱՆ

Սրռունկ ուստի՞ կուգաս ծա՛ռայ եմ
ձայնիդ.
Սրռունկ մեր աշխարհէն խապրիկ
մի չունիս.—
Մի՛ վազեր երամիտ շուտով կու
հասնիս.
Սրռունկ մեր աշխարհէն խապրիկ
մի չունիս։ +

Թռղեր եմ ՝ե՛կեր եմ մրլքերս ու
այգիս.
Ռանի որ ուխ կանեմ կու քաղվի
հոգիկ.—

Սրռունկ պահ մի կացիր՝ ձայնիկդ
՝ի հոգիս.
Սրռունկ մեր աշխարհէն խապրիկ
մի չունիս. +

Քեզ խապար հարցնողին չես տա-
նիր տալապ։
Զայնիկդ անուշ կուգայ քան ըզ
Էրրի տօլապ։ —
Արուունկ պաղատատ իՀնուս՝ կամ
թէ 'ի հալապ։
Արուունկ մեր աշխարհէն խապրիկ
մի չունիս։ +

Սրտերնիս կամեցաւ ելանք գընա-
ցանք։
Ա.յս սուտ աստնվորիս տէրտէրն
խնացանք։ —
Ալու հացկեր մարդկանց կարօտ
մընացանք։
Արուունկ մեր աշխարհէն խապրիկ
մի չունիս։ +

Աստնվորիս բաներն կամաց կա-
մաց է։
Ինթէ Աստուած լսէ դռնակն բաց-
ցէ։ —

Ղարիպին սիրտն է տուգ՝ աչերն՝ի լաց է.
Արուունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունիս. +

Աստուած քեզնէ խնդրեմ մուրվէթ ու քէրէմ.
Ղարիպին սիրտն է խոց ճիկերնէ վէրէմ. —
Կերած հացնէ լեղի՝ ու չուրն է հարամ.
Արուունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունիս. +

Ո՛չ զլուր օրըն գիտեմ ո՛չ ըզկիրակին.
Օարկած է զիս շամիուրն բռնած կրակին.
Այրիս չեմ հոգար՝ ձեզնէ կարօտեմ.
Արուունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունիս. +

Հաւատով պառկեր եմ, ներքևս է
ՓԸՇԽԻ.
Հոգին այլ չեմ դարշիր կը թըվի
մուշկի.
Շատ հարէթ մընացանք անկող-
նու տոշկի.
Կըռունկ մեր աշխարհէն խապրիկ
մի չունիս։ +

Պաղատաւոր կուգա՝ կերթաս 'ի
սէհրատ.
Թղթիկ մի գրերեմ տամ քեզ ա-
մանաթ.
Ճատուած թող վկայ լինի քո վե-
րադ.
Տարեալ հասուցես զայդ իմ սի-
րելեաց.
Կըռունկ մեր աշխարհէն խապրիկ
մի չունիս։ +

Գրերեմ մէջ թղթիս՝ թէ հոս մը-
նացի.

Օրիկ մի օրերուն զաչերս չի բացի.
Սիրելիք ձեզանէ կարօտ մընացի.
Արուունկ մեր աշխարհէն խապրիկ
մի չունիս։ +

Ուշունն է մօտեցեր գնալու ես
թէպտիր.
Նրամ ես ժողովեր հազար և բիւր.
Ինձ պատասխան չի տ՚ուիր ելար
գընացիր.
Արուունկ մեր աշխարհէն գընա՛ հե-
ռացիր։ +

Ույսօր զարիպութիւնն միակ միա-
ւոր.
Հոգւով և մարմնով ես եմ մեղա-
ւոր.
Սուրբ Սարգիս օգնական ճերմակ
ձիաւոր.
Արուունկ մեր աշխարհէն խապրիկ
մի չունիս։ +

——

ԲԱԺԱԿ ՈՂՋՈՒՆԻ

ԱՌ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ինչէ՛ք զուարթունք՝ և՛ի Ձեր թեւս
ապաստան.
Յայց ելցուք այսօր յանձկալին
Հայաստան.
Ընծաղկապսակդ ածէք այսր
զքնար՝
Որ երգէր երբեմն 'ի դրախտս
Ադենայ,
Հանդուցեալ այժմիկ 'ի շիր-
մաց մնար՝
Զայն տուք զարթուցէք զոր-
դիս Արամայ։
Ասի դիւցազունք
Դողեալ զդամբան,
Եւ անտի զուարթունք
Ողջո՛յն քեզ ողջո՛յն

Սահմանադրութիւն։

Ո՛վ որ յեցեալ 'ի տխուր սափոր դիւցազանց
Գթով յերկինս աչս նամէտ բերբ աչաց,

Ով Հայաստանեայց ոգի սրբանուէր՝
Ահա հաշտ ակամբ ժպտի քեզ Աստուած
Պարզի երգներանդ լար կապոյտ յեթեր
Դառնայ Աղաւնեակն ոսոտով ձիթենեաց
Նփրատ առ Տիգրիս
Որմեայն առ Սևան
Տալով աւետիս
Ինչեսցեն միաբան
Ողջո՛յն քեզ ողջո՛յն
Սահմանադրութիւն։

Ել 'ի յաչ՝ սիրտ 'ի սիրտ՝ ոգի

խառն յոգի
Ա՛ստի՛ք օ՛ն անդր յասպարէզ՝
սիրտք հայեցի։

Օվ է՛ք նաղ տեսիլ պարզի
արդ յաչս իմ։ . .
Ահա յոյս և սէր՝ որպէս
զոյգ հրեշտակք
Առաջնորդեն մեզ . . . ով
Տէր . . . խարիցի՞մ . . .
Ո՛չ զայդ վկայեն սիրոյ այդ
բաժակք . . .

Հայկեանք առ Հայկեանս
Դարք դարուց՝ որ գան
Տարով արձագանս
Արկնեսցեն միաբան
Ողջո՜ն քեզ ողջո՜ն
Սահմանադրութիւն։

Թ. ԹԵՐԶԵԱՆ

——

ԴԱՇՆԱԿ

ԱՌԱՋԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՄԱՆ

ՀԱՅԿԵԱՆ ԹԱՏՐՈՆԻՆ

ՈՐ ԻՍԱՄԳԻԻՂ

Օ՜ն մերնախնի դարուց կարդամք հրաւէր,
Նախնի դափնեաց՝ սուրբ ձեռաց հիւս պսակք.
Մեր հայրենի փառաց մանկունքն անվեհեր
Դան յերևան գեղեցկահիւս գիսակք։

Դունդ 'ի դունդ
Սիրտք 'ի թունդ։

Ժամանակաց՝ անցից՝ վեմ կըրթարան։
Եւ նոր դիպաց՝ նոր զգացմանց կարգադիր։
Ընդ մեզ նոր՝ արդ կկանգնի տեսարան

թէ՛ կրթութեան՝ թէ՛ հաճոյից
արգաղիր։
Յոսձայն կուտանք մենք ծաղ-
կալից
Յայաստանի սուրբ դաշտերուն.
Եւ կցրուի սրտից թափիծ
Եթէ հայրենեաց յիշեմք զանուն։
Ով սուրբ Յայաստան
Փառաց օթեւան
Որբ զաւկներդ հոս.
Քեզ պիտի ողբան։
Յոս երաշ՝ անմահ
Քո նախնի փառաց
Մեզ պիտի վառէ
Ի սէր հայրենեաց
Մայրիկ Յայաստան
Փառաց գերեզման
Որբ ոիդրքդ այրիդ
Յոս պիտի ողբան։
Մէկ մայր մ՚ունինք մերն Յայաս-
տան և հոգին

Եղբայրութեան արտերնուս մէջ
կը սնգայ։
Օ՜ն չարադէպ մեր բաղդն ու սէր
կաթոգին
Ֆոս միութեան ուժոյն ընենք են-
թակայ։

Եւ ձեռք, ջանք
Միմեանց տանք։

Ընդ հանրական սէրն և հոգին հա-
յութեան
Մեզ մուսայից օթևանիս նուիրի
Ֆնչեն հայ փառք՝ անուն՝ նոր՝ տուր
յաւիտեան
Նորէն Սիսակ, Դեղամ՝ ի կեանս
հրաւիրի։

Կվերածնին հոս ոսկի դարք,
Ֆոս տեղ մտքեր կրնան արուիլ։
Կշտկուին հոս անկիրթ բարք,
Ֆոս և ծիծաղ կրնայ գտուիլ։
Ով տուրբ Ֆայաստան
Քաջաց օթևան

Հոսկէ որդիքդ հոն
Գիրկդ պիտի գան
Հոս ոճ Հայ լեզուին։
Նոր զարդ՝ ձև կառնու
Կեանք անմեղ 'ւերկինք
Կազդեն սրտերու
Քաղցրիկ Հայաստան
Մեր հարց օթևան
Ծոցդ որդիքդ որ գան
Էր պիտի ողբան։

Գ. Գ. ՉԱՓԲԱՍՏՃԵԱՆ

ՀԱՌԱՋԱՆՔ

Սա տխուր վիճակ տարաբաղդ Ազգիս
Ինչ արիւն արցունք կ'հոսեցնէ
Նորնոր յոյստածող Հայոց աչերէ։
Սա մեր անողորմ բաղդին հարուածներ
Քանի սրտառուչ հառաչանքներով

Ո՞վ մինեն Հայ սրտերն, դող տան ու
երեր
Ո՞վ Տէր, բաւ չէ՞ն ինչ որ մինչև
ցարդ
Կրեցինք սուր, ցաւ, աւար ու աւար
Ո՛չ դու հաշտութեան ծիածան
զուարթ։
Ո՞ր սուրբ Հայրենեաց երկինք
պարզեցեր
Եւ դեռ չշնորհած զՆրեն Հայ-
րենի
Կը զրկես զմեզ Ամողէն Հայրենի։
Մէկ սիրտ, մէկ ոգի. ամենքս
մէկ անուն
Մէկ յոյս, մէկ հաւատք կերրող
մէկ արիւն
Մէկ ապագայի և ակնկալու
Ի՞նչու չմիանանք՝ի մի յօդ սիրոյ։
Մի՛ զմեզ, Տէ՛ր, մի՛ պատժեր ա-
նաչառ
Կեցուր քու շանթերդ բարկու-

թեան արդար
Օ՜իրար սիրելու, օգնել իրարու
Կ՚ուխտեմք աւտարիկ ուխտ սուրբ
՝ի սրտէ
Եւ խաղաղութեան թող գայ հը-
րեշտակ
Մինութիւն և սէր պահել՝ի սիրտ
մեր։

Ս. Գ. Գ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՓԱԵՈՒԿ ԵՒ ԱՐՑՈՒՑԿ

1. Դարանամուտ կամ վաղուց ես
լուրիկ,
Եւ ոչ դիւրով քեզ բերի ձեռք
հիմիկ
Պէտք է երգես իմ սիրուն
Էրտուտիկ,
Որ դու տաս սրտիս զու-
արթ քու դայլայլիկ։

Մի դողար՝ի տես վանդա-
կիս անել,
Ծաղկօք եմ պատած ես
անոր թելեր,
Դու քեզ մարդերու կըր-
նաս մէջ կարծել
Երգէ ինծի հետ թըռչնիկ
սիրաւէր։

2. Երբ գայ նոր գարուն բընու-
թեան նոր ոյժ,
Եւ մեզի պայծառ օրերու
տայ յոյս,
Դողտրիկ մարմանդին մէ-
ջէն ձայնդ անոյշ,
Ամբիծ քու սիրոյդ կը տո-
նէ զինձոյս։
Այլ իմ քովս այժմիկ ըն-
դէ՞ր կաս լըռած։
Մինչ ես ձայնուս եմ քեզ
աղերսարկու։
Եհ՜, գուցէ ես քու ձայնիկ

չեմ լսած,
Թող ես փորձ փորձեմ՝ օ՛ն
երգէ՛ և դու։
հա՛մ Ո՞հ, գուցէ ես քու անուն
չեմ ուսած
Թո՛ղ ես փորձ փորձեմ,
օ՛ն երգէ՛ և դու։
3. Վա՜խ, այսքան աղերս չը գըտին
շնորհ,
Եւ դու կաս մընաս միշտ
խուլ ու պապանձ,
Ըրդ թըռի՛ր գնա՛ հաւիկդ
ապաշնորհ,
Ձ՛ուզեմ քեզ ընել գերի իմ
կամաց,
Բայց խիստ հոգանեաց տակ
մէյմ՛ որ նեռուիս,
Ը՛ռ երգերդ իսկոյն ու հեշտ
գուարթիքդ,
Օ՜խ անտառներո՛ւ տես-
նեմ պէտք ունիս

Որ զազատութիւն երգես
անդորրիկ։

Ն. ՌՈՒՍԻՆԵԱՆ

ՏԱՐԱԳԻՐ ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐ

"Տարի մ'ալ անցաւ
Գնաց սահեցաւ
Այլ դու Հայ զինուոր
Թափառական մնաս
Յերկիր հեռաւոր
Սուգ անմխիթար
Օ.քեզ շուրջ պատած
Եւ դժբաղդ սիրտդ ալ
Յուսաբեկ եղած
Սուրդ ու քո տէգդ
Ժանգոտ վար դրած
Եւ զօրեղ արմուկդ
Տկդիդ յեցուցած
Դի՛ր դու Հայ զինուոր
Քու յոյսդ առ Աստուած

Վեր վերցուր գլուխդ
Տես, ով է կանգնած
Ու քեզ կ'ակնարկէ
Ազատիչն Աստուած
Յաղթութեան պսակ
Իւր սուրբ ձեռքն բռնած
Ու ուրեմն նիզակդ
Որք ելեր կանգնէ
Եւ արտիդ խորէն
Ընոր փառք խրկէ
Վ. Հատիր մի բնաւ
Քաջ զինուոր դու Քրիստոս
Օգի այսուհետև
Էն Աստուած գթած
Ընդ քեզ է յաւէտ
Յաղդաւէր մրցանող
Կուտայ քեզ պսակ
Բոլոր ճգանցդ փառք
Յանկալեն ազատութիւն։

Ա. Ս. Ց. ԱՆԴՐԷԱՍԵԱՆՑ

——

ԹՐՔԹՈՅՍ Է ՄԵՂՈՒԹԻՆ

Դու նոր Հայրենիք, դեռ նոր
ազգութիւն
Դարուս շնորհիւ պարտք և ի-
րաւունք
Սահման և կշիռ թողթուել որ
գիտցանք
Ո՞վ Հայաստանի պանդուխտս զա-
ւակունքս
Արնա՞նք արդ զոհել կրնանք ա-
մէն բան
Ընճնական կըրից մատնել անխը-
նայ
Եւ Օտարին շահն Ազգին ինա-
սող
Ո՞վ կրնայ խնդրել, որ այն եղեռն
Հայ
Ոչ գոյշ, ո՛վ Հայեր, զգոյշ կենանք
միշտ
Քանզի աղգադաւ սլանան նետեր
Ոեր խոցուած սրտերն կրկին խո-

ցելու
Պահենք զայն ամուր սիրոյ վահանաւ
Սիութիւնն ըլլայ զբրահ անլքատանգ
Եւ անհամաձայն թէ գտնուինք մեր մէջ
Այլոց միջամուտներենք ո՛չ երբէք։
Ազատ ու հաստատ , ամենքս ալ եղբայր
Հեռատես , ըզգոյշ և գործն անդուլ
Ազգային կամաց հրպատակ անխօս
Այսպէս կրթուի Հայ մանկութիւնը
Այսպէս պատրաստուի պատանեկութիւնն
Ու երիտասարդութիւնն ըլլայ անընկուն
Ինտէր ախոյեան Ազգին իրաւանց
Ու թողծերութիւնն հակէ լրջամիտ

Հայոց բաղդն ու Էրև յուսով ողջ
Ջունել։

Ս. Գ. Գ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՄՈՒՍԱՅՆ

Ո՛ ապատերև յեցեալ նոճոյս 'ի
ստորուտ
Օ՜աղիս Հայոց լարեալ 'ի քնար
տխրանուէր,
Ընչն իմ 'ի լար, աչկունքս 'ի վեր՝
մերթ յարօտ,
Յե՞րբ հնչեցից 'ի վանդ ողբոցն իմ
զայեր։
Ո՛հ ժպտեսցի՞ն աչկունք բաղդին
յիս արդեօք,
Թէ որպէս ցարդ՝ նոյն և յապայն
անողոք,
Ե՞րբ ծագեսցէ երջանկութեան
քաղցր արեգ,

Եւ փոխեցի տխրանալ ողբս յօրհներգ։

Նէ՞ր ոչ, լուսնեակդ, վառ 'ի վառ,
Կիսով յամպոց գողացեալ։
Եւ զերթ կանթեղ խղաս-պառ,
Մերձ 'ի խաւար գոգ շինչեալ։
Ո՛հ միայնիկ և մենիկ
Ողբամ ըզբաղտ խաբուսիկ
Եւ թէ լռէ իմ հաղագ,
Լսեմ ձայնիս զարձագանգ։
Հեծէ սրտիս իմ խռովչ,
Մատուռնքս 'ի լար հրպին ոչ։
Ա՛յլ զի՞ տեսիլ անսովոր...
(տրանց Եղանակի)
Մինչ կամ ատէն մենաւոր։
Ահկո՞ւնքս արդեօք զիս խաբեն,
Ա՛յլ ո՛չ, դոքա հրեշտակք են

—Ողջո՜յն Երկնից զոյգ տաւորակք։

—Ողջո՜յն կրկին աղաւնեակք։

ՍԻՐԵՐ ԵՒ ԴՈՒԹ

—Ողջո՜յն, հրեշտակդ ողբերգակ,

—Ահա՝ դու չես միայնակ։

Մի արդ խռովիր, չեմք խաբուսիկ երևոյթ,

Նա քեզ ծանօթ։ Սէր իմ անուն, իսկ սա Դուրթ

Կաց դու պահ մի, տրխուր ողբոյ տո՛ւր աւարտ,

Լուր զոր երգեն զաւակք Երկրին, ուր կաս արդ։

ԴՈՒՐԹԱՆ

(Ինէրտոսաբ սկսէալ)

Երկածք Հայոց ժամանակին ընդանիւ

Փշրին տակաւ, մինչդեռ սիրոյ
Համբուրիւ
Ուիտեմք 'ի Սէր եղբօր՝ զկեանս
դրնել դրաւ,
Օ՛ն ա՛նդր 'ի մէնջ այր ընկերին
լարել դաւ։

Սրացաւ 'ի մէնջ բաղդն ան-
համբոյր,
Արդ նոր բաղդիս քաղցր է
համբոյր,
Եղբայր զեղբայր գգուէ Սիրով,
Ո՛ոխն աղքատին մատչի Գթով։
Լանց գիշեր՝ արդ առաւօտ,
Ելոյզ ժպտին Ա՛ստեաց արօտ,
Եւ վառ 'ի վառ շողշողելով
Լոյսն արեգին ծրփայ 'ի ծով։

Հա՛պա մանկունք
Վեհ քաջազունք՝
'Ի գլուխ պրսակ
'Ի յաղթանակ,

Ուռեալ նուապս
Ամրաքս արտագս
Օ՛ն փուքթաացուք,
Օ՛ն երգեացուք՝

Սէր և գութ
Մեր պրսակ,
Ու մեր բաղդ
Հրաւիրակ։
Ցնծացեն
Ոբք լսեն
Թէ՝ "ուր Հայ,
Ձիք՝ անդ վայ"։

ՆՂԻԱԶԱՐ ՄԷԼԻՔԵԱՆ

ԱՌ ՄԱՅՐԹԵՆԻ ԼԵԶՈՒ

1-Ով մեծասքանչ դու լեզու,
Ով հեշտաբարբառ մայրական,
Փառիկահնչիւն բառերուդ
Նման արդեօք այլ տեղ կան։

Դու որ նախ ինձ հնչեցիր,
Նախ սիրոյ, ո՜հ, հեշտ խօսքեր.
Ոյն նախ զքեզ թոթովելս
Դեռ իմ մտքէն չէ ելեր.
Իմ մայրենի քաղցր լեզու
Կեա՛ց անսասան, կեաց յաւէտ
Կեաց միշտ լեզուդ հայկարժան,
Կեաց ծաղկալից ծաղկաւէտ։

2-Ի՞նչ դառն վիշտ է սրտիս
Երբ օտար տեղ ու լեզու
Ռունի իրեն զիս քաշէ,
Սրտէս արիւն կը հեղու.
Ո՜հ զայն օտարն ես սիրել
Ինաւ չեմ կարող 'ի սրտէ,
Ըէ այն չէ քաղցր իմ լեզու
Որ սիրով զիս կ'ողջունէ.
Իմ մայրենի քաղցր լեզու
Կեա՛ց անսասան, կեաց յաւէտ
Կեաց միշտ լեզուդ հայկարժան,

Կեաց ծաղկալից ծաղկաւէտ։

3-Լեզու համակ սիրաշարժ.
Քանի ճոխ պերճ ու պայծառ,
Մինչ կը հնչես դուն քեզի,
Սրտերն ամէն զողացար.
Հնչէ՛ հնչէ՛ յաւիտեան
Վեհ դիւցազանց պերճ երգ դու
Թոթուէ փոշիդ խոր մութէն
Նո՛ւ երևան պերճ երգ դու։
Իմ մայրենի քաղցր լեզու
Կեա՛ց անսասան, կեաց յաւէտ
Կեաց միշտ լեզուդ Հայկարժան,
Կեաց ծաղկալից ծաղկաւէտ։

4-Յաւերժական Սուրբ Գրոց մէջ
Կեաց միշտ նորէն ու նորէն
Կշռեալ անուշ քու տողերդ
Թող ամէն սիրտ արծարծեն
Հնոր ունել Արարչէն

Կամ պէտք ըլլայ աղօթել,
Հրթունքս սրտէ բորբոքած
Կաղաղակէ անարդել.
Իմ մայրենի քաղցր լեզու
Կեաց անսասան, կեաց յաւէտ
Կեաց միշտ լեզուդ Հայկարժան,
Կեաց ծաղկաղից ծաղկաւէտ :

ԽՐԱԽՈՅՍ

Ի ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Ժամ է, Հայեր, արիք ձեր բաղդին ողջունել,
Լուսոյ դարուն վերածնութեան դրօշու տակ.
Հայրենիք ձեզ հրաւէր կարդայ դալ խրմբել,
Ուր ապագան ձեր գլխուած կայ փառունակ :

Բաց են ասպարէզք ազատ
քայլերու,
Եւ երկինք լցող զգաստ ուխ-
տերու։
Մի ազա ճարակ մատնէք
կոյր մրրցմանց,
Թիրան, արտասունք և տենչ
ձեր Հայ դիւցազանց։

Յառա՜ջ, յառաջ,
Մեծ է ձեր կոչում,
Բաջի ծնունդ քաջեր,
Մասեաց սարերէն
Ելեւոր դարեր
Լուռ ձեզ կը դիտեն,
Քայլերու շարժում,
Յառա՜ջ, յառաջ,

Մայր ձեր սիրուն, մայր դարե-
րու Հայաստան
Ձեր է կարօտ, ձեր ժիր ու ազատ
ջանքերու
Ընոր լուսոյն խամրած դարատ
միտքան

Նրէք պրծնել, Հայեր ժամ է
քրտնելու։

Ձեր ճակտին ցողով ջինջ պի-
տի ցոլան
Սին, կոթող փոշոտ լուսոյ
Հայութեան
Բա՛ւ է ձեր զոհեր, բա՛ւ ալ
միացէք
Դար նոր ձեզ բանան Աս-
տուած և օրէնք։

Յառա՜ջ, յառաջ
Մեծ է ձեր կոչում
Քաջի ծնունդ քաջեր
Մասեաց սարերէն
Ելեր դարեր
Լուռ ձեզ կը դիտեն
Քայլերու շարժում
Յառա՜ջ, յառաջ։

ՆՈՒԷՐ

ԱՌ ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ

ՈՂՋ ԼԵՐ ՔՆԱՐ

Թէ Հայկազանց ոսկի դարուն ոսկի քնարք լռեցին
Եւ թէ Հայուն անմխիթար հեծել պէտք էր, դարերով
Ալ թող դադրին արցունք հերիք լսենք այս նոր քնարին
Որ նոր երկինք կը զարդարեն ուրախութեան թելերով։
Ողջ լեր քնար ձայն տուր թըշուառ Հայաստանի զաւակաց
Որոնց քաղցր է և սրբազան մեր հայրենեաց յիշատակ
Ընչէ քնար և թող խայտան ոսկերք Հայոց դիւցազանց
Լուր տար մեզմէ թէ հոս հոս ըսէ ողջ են դեռ Հայք։

Ֆայկայ պանդուխտ զաւկրներուս
կանչէ երգերդ հայրենի
Թող յաւիտեան ձայնդ անուշիկ
հնչէ Ֆայերուն
Եւ թէ լսեն ամեն ազգեր եթէ
աշխարքն ալ անցնի
Ալ Ֆայաստան տուրբ Ֆայրենիք
երգէ դուն։

Մենք այն երկրին
Զաւկրներն ենք,
Որուն նմանն
Ալ չկայ։
Երկրին որուն
Գլխուն եկածն
Ուրիշին չէ
Պատահած։

Ի ՎԵՀԵՏ ՄԵՍՐՈՊՈՎԵՏԵՆ

Ուրդի՛ք Ֆայկայ, տրդի՛ք փառաց,
Զարթի՛ք կոչէ զձեզ Աստուած.
Տեսէ՛ք Մասեաց ի գլուխ ազատ

Ընդարձակ Հայոց Նորահրաշ.
Ունէք ձեր ի գոյն լուսացին բոց,
Սիրտք վառեսցին սի՛րտք Հայոց.
Եւ մխեսցին կուռ բազուկք,
Որ ան 'ի հնոց գեղարդունք,
Յազատութեան ասպարէզ,
Թափել շանթիս սասակավրէժ։

Օ՜ն փողեցէք. ելէք ի դղրդ,
Ատուած է ձեր առաջնորդ.
Լուա՞յք, փառք ձեզ կարդան հրաւէրք...։
Տեսէք անդուստ հարց ստուերք
Ընկրեժք առ ձեզ կարկառեն ձեռս.
Արդի՛ք, խո՞ւլ հարցդ էք յաղերս
Ելիք ընդ ձեզ դաշնաւոր
Արդարութիւնն է հրզօր.
Եւ զլանալինն առեալ Հայկ
Ելջ քաջորդւոցն ի բանակ։

Օ՜ն... ոյք ի Հայս մնուին զերդ
Ռել՝

Ուսան սա վայր է անել.
Ըզսուր մահու ած շուրջ պահպան
Տէր յՆդեմեանն Հայաստան.
Ասէ. Ո զսոյն կոխէ սահմանս՝
Մի ողջ դարձցի յիւրն ի վանս
Որ վան Հայոց ած երկաթ՝
Ինք պնդեսցի յայն կաշկանդ.
Եւ զոր կոխել զայր անահ
Համբուրեսցէ թոպամահ.
Արի՛ք իմ քաջք, որդիք Հայկայ
Ազիժուց ձեր օր հասեալ կայ,
Երկինք զինեալ են՝ դատել հուրբ
Պըղծողն ըզձեր երկիր տուրբ,
Թէ զձեր խնդրեն արդ տէր, աղեղ.
Տո՛ւք, թափեցէ՛ք կարկտի տեղ։
Յասուն արդար է ձեր Հայք,
Ընցեալ դոչէ, Մի՛ դըլայք.
Ըզատութեան օր սա ձեր,
Սոցա՝ անտիւն հաս դիշեր։

Արի՛ք, ծաւալ տուք բարձր յայեր

Քրիստոսապատակ ըզդրօշ ձեր.
Ղ՝էնք ուր Փրկչին նշան կայ կուռ՝
Միեւս անկցի կոր յաթուր.
Օ՛ն զաչդ ի վեր ձրգէք յերկին՝
Երդումն տուք ահագին.
Մի ձեռքդ ի ջցեն՝ մի տուսեր
Դարձցի հանդչել ի յաղդեր,
Յորչափ դեռ շիթ մի վերջին
Մընայ յերակս ոտխին։
Ո՛ւրախ իմ քաջք, օ՛ն անդր յառաջ
Ձեզ հովանի կայ տուրբ խաչ.
Բլթեսցին յայն տէգք և փրքին
Որ լարեսցէ թշնամին։
Ա՛ռ, ոյց հասին փառք ի վրսեմ
Թրուչել զահէդ յերկնից սեմ.
Ընդեակ ոտամբ գլուխս ոտխս
Թոպել գլորել ի դրժոխս,
Մուծանել զաչն յերկնից սահման
Ազատ թողեալ զ՝այաստան։

ԽՈՐԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ԱՆԶՈՒԿՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Ա.

Հայաստան քաղցր իմ Հայաստան
Ոգիքս յանուանդ հալեցան.
Մինչև ցե՞րբ ես ի քէն պանդուխտ,
Ոգւոյս իմ ե՞րբ լացցի ուխտ։
Երդեօք աչքս անցկալեց
Երբեմն ըզքեզ տեսցե՞ն,
Աչքս այս արտասուալեց
Երբէք դադարեսցե՞ն.
Հուրթն իմ ի հողդ կենաւոր
Տացէ՞ զհամբոյրն ուխտաւոր.
Երդեօք գլուխս վըշտակոծ
Հանգիցէ՞ քոյդ 'ի ծոց։
Հայաստա՜ն սէր իմ Հայաստան.
Ոգիքս ի տենչդ հալեցան.
Մինչև ցե՞րբ ես ի քէն պանդուխտ
Սրտիս իմ ե՞րբ լացցի ուխտ։

Բ.

Հայաստա՜ն, պերճ իմ Հայաստան,
Ո՛վ երկիր նուիրական,

Ընոց կենաց և որորան,
Աշտարար երկնից խորան։
Ի քո սուրբ հոգանիս
Ո՞ զնրժդէհ տանէր զիս,
Ո՞ ի սոռերսդ Նրազմոյն
Ըզնախնեացս հեղցէ քուն,
Ընմահութեանց վեհաբուն
Նրծել անդ զօդ և զաւիշն,
Եւ զաստեացրս վըշտաց
Գրտանել կատարած։

Այաստա՞ն, իմ քաղցր Այաս-
տան,
Ոգիքս յանունդ հալեցան.
Մինչև ցե՞րբ ես ի քէն պանդուխտ,
Սրտիս իմ ե՞րբ լըցցի ուխտ։

Գ.

Այաստա՞ն, սիրուն Այասան
Յուսոյ խարիսխ մարդկութեան
Դու ու իմ լոկ ակընկալեաց վայր
Յոր աչք իմ ճրգին յամայր

Ո՞ զմին գէթ տայր լընուլ
Ջիան ըղձից ի քեզ հոյլ
Ո՞ զփափաքս յարատև
Իբր ըզսիրք մի թեթև
Հատուցանէր մինչ առ քեզ,
Եւ զայս ողջոյնս սրտակէզ,
Եւ զհառաչս ոգւոյս բիւր
Ցոր ընդ բլուր տա՛յր ի սիւռ։

Հայաստա՛ն, քաղցր իմ Հայաստան,
Ոգիքս ի տենչդ հալեցան,
Մինչև ցե՞ր ես ի քէն պանդուխտ,
Սրտիս իմ երբ լցցի ուխտ։

Դ.

Հայաստա՛ն, իմ վեհ Հայաստան,
Երանութեան օթարան.
Ո՞ տայր զաւուրս իմ ցաւալիս,
Փոխել ո՞հ յերանելիս,
Ոչ փառօք փայլելով
Ա՛ղանցուկ ոչ ոսկւով,

Ելի զքեզ տեսանել
Սուրբ բզաարաղ ողջունել,
Օաւերակօք քո փարել
Եւ զհարցս անդուստ ձայն լսել.
Եւ զնոցին հետս անանց
Ամբուրել զետնամած։

Այաստա՜ն, քաղցր իմ Այաստան,
Ոգիքս յանուանդ հալեցան,
Մինչև ցե՞րբ ես ի քէն պանդուխտ,
Սրտիս իմ երբ լցցի ուխտ։

Ե.

Այաստա՜ն, անոյշ Այաստան,
Դու զոգիս լընուս համայն.
Դու խրախոյս, փառք իմ և վեշտ
Յոր սիրտ իմ թրռանի՛ միշտ.
Ես պատիւ, զինչ և զերկ,
Խանդ, ըզշունչ և սին զերդ
Ի բագինդ արդադիր
Պախեցից լուաձիր.

Մի լոկ խնդրեալ փոխարէն՝
Զի ըզքեզ աչք իմ տեսցեն,
Զի մի՛ ցմահ անձկալից
Զերդ սերկեան գոչեցից.
Հայաստա՜ն, իմ քաղցր Հայաստան,
Ոգիքս յանուանդ հալեցան.
Մինչև ցե՞ր ես ի քէն պանդուխտ,
Սոսկա՜ իմ ե՞ր ըլցի ուխտ։

ԽՈՐԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ՆԱԽ ԵՐԳ

ՑԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՆ
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԱՏՐՈՆԻ

Ժամանակն

Լոր դու այսպէս. ո՛ սեաւ Գիշեր
Զուարթ բնութեանն ազնիւ պատ-
կեր
Տրխրանըկար գունով ներկես,

Սրդատեսիլդ ի՞նչ այս հանդէս։
Ո՛վ անարեւ տրխուր Ոգի,
Դու էիր ինձ միակ համատի,
Երբ բեղմնաւորբնութեան արդանդ
Շ.ք.քեղ ծննդովք չէր արդաւանդ։
Թէ իմ շրջանս մերթ տեղի տայ՝
Որ քու խաւարդ երկար մնայ.
Ունիմ անկէ և ես բաժին՝
Իմ անցելոյս յիշատակին։
Երբ ժամն հասաւ՝ եկան՝ի տես
Ի՞ն անց.քերուս ինչ ինչ հանդէս,
Ի՞ր սեւրակ քոյին ըստուեր
Ընդ վառվռուն քողէ աչեր։

Խոնարհն

Ի՞նչ այս դողդոջուն վրսեմական
ձայն.
Ի՛նչ քաղցրիկ մրմունջ... և օ-
տար չէ այն.
Վ.եհ ալեւորն է, պատկառելին ծեր
Որ հոն միայնակ կ՚երգէ իւր գիշեր։

—Յո՛յս գեղաժրպիտ, դիմենք անոր արդ.
Դու որ պճնեցիր մեզ երբեմն 'ի վարդ,
Զայն տուր այժմ աղէ՛. խրախոյս կարդա նոր,
Օ՜ի հասաւ ահա այն երջանիկն օր։

Յոյն

Օն՝ յառաջ, մանկունք, նոյն ինքն է՝ տեսէ՛ք,
Ընհամբեր ոգւով որուն կրսպասէք։
—Տե՛ս և դու, հինաւուրց ծերունի,
Անկըտին՝ որ դիմօք սիրանիշ
Կարօտով քու տեսոյդ հայրենի
Դալստեանդ կը ճնային ակնապիշ։
Սոյն խմբիս պարտաւոր կանգնած աստ՝
Գեղազուարճ դամ ահա խոստ-

մնալիր։

Մինչ ակումբս հանդիսիդ քու պատրաստ
Ընցելոյդ են եկած 'ի խնդիր։

Դատանակն

Քաջ իսկ արժան, մինչ իմ անցեալս յորդառատ,
Ի փորձառու ծեր իմաստնոյ բիւր խրատ։
Մէն մի թերթ են ճակտիս կնճիռք բարդ 'ի բարդ,
Ուր խառն զուարթ տրխուր անցքեր տեսանէ մարդ։
Օր ի խիստ օտար են մանկութեան ինձ օրեր։
Յաւիտենից եմ ծնունդ, և ծեր անծեր,
Ամլ ապագայս անվերջ թ'է իբր անփուշ վարդ,
Ամ'ն քու շնորհիւդ է, Օրիորդ գեղազարդ։

—Ողջ և դուք, Յարկիս մանկունք սիրական,
Որ հընացեալ անցիցս տաքնոր կերպարան,
Լսուին դարձեալ հաճոյական ձեր ձայներ,
Սովորին լսողք փորձառութեան միշտ դասեր։

ՑՈՑՄՆ ԵՒՍ ԶՈՒԳԱՆՈՒԱԳ

Լուսապանծ նո՛ր հանդէս.
Ալ գիշերն անտես.
Վիսալոյս արշալոյս
Ամպոց մէջ տայ իւր խոյս։
Ողջունիւ Երևուն
Մինչ ժպտի բնութիւն,
Ժամ է ձեզ, մի՛ դրլաք,
Ուէք զայն ձեր նուագ։

ԻՍՖԷՍԱԿՆ

Ո՛ քաղցր Երփի, մինչ կը բերես առաւօտ,

Ո՛հ նախարձակ շառաւիղքդ անա-
ղօտ։
Ակենկար ցոլան լերինք նախալոյս,
Միմեանց համբոյր տան ցողալեր
բոյսն ու լոյս։
Ա՛յլ քաղցրագոյն ես դու այսօր,
Ա՛հ անքուն,
Որ ՀԵՐՄ լուսովդ ակնարկելով Ան-
ցեալն՝
Որ վերածնես յիշատակայ ածիւն-
ներ,
Հանդիսադիր ելեալ՝ կուտաս մեզ
հրաւէր։
—Ապաքէն մեք աշխոյժ սրտով
Քեզ ընդ առաջ արշաւելով
Օ՛ուարթ դիմաք՝ ի գլուխ նա-
լոտ,
Հ՚ք քեզ տեսոյդ անձկակարօտ՝
Փութամք ասուէն միահոգոյն։
Ընդհրաժեշտ մեր նախոգէոյն
Ա՛ՀԵՐ ծերունւոյդ տալ՝ ինուէր,
Օ՛ի դու տուիր մեզ քաջալեր։

ՀՐԱԺԵՇՏ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԱՑՐՈՆԻ

ՅԱՒԱՐՏ ԱՌԱՋԻՆ ԵՂԱՆԱԿԻՆ

Խմբեալն

Մինչ ծովամաց կան 'ի խշտիս արփ-
ւոյն սլաք բոցեղէն,
Եւ ամանկար ամպոց ծածկոյթ
զաչկունս երկնից աքօղեն.
Արդ գիշերայն,
Մինչ լռելեայն
Նիրհէ բնութիւն
Օ՛ն մեք համբուն
Ըզմանկական մեր շրթնեկաց
Պարզեալ ըզծիրս յերդ նուա-
գաց,
Ի սոյն ատեան՝
Ուր բիւր մատեան
Ժամանակին գան յերևան,

Եւ ուր անցեալն 'ի հայելւոջ.
Ի ներկային խուսափի ո՛չ,
Օ՛ն մեք զերկնից սքանչելիս
Դեղգեղելով 'ի գրուատիս,
Զայնքս հնչեսցեն յայս Ա՛յր
յօրհներգ՝
Զանգ արձանաց տացեն
այերք,
Եւ ժպտեսցի Երկինք 'ի վեր,
Որ զտիւն արար և ըզգիշեր։
Որ զ,յաւիտեանցն զԺամանակ
Զաւիեալ տարւոյն 'ի յեղանակ՝
Պճնէ զարնամբ զուարթ ազեղ
Պարուց հաւուց 'ի բիւր գեղ-
գեղ։

ԺԱՄԱՆԱԿԻՆ
ԱՌ ԽՄԲԵԱԿՆ

Եւ զի՞ զուարթ ձայն մանկական
ըզծերունւոյս խառվէ նինջ,
Զոր քնէաց զեպիւռ զարնան յիմ
թարթևանս սրփռէր այն ինչ...

Մի, մանկունք, մի՛ երգով անժամ ըզժամանակս առնէք զնաս,
Թէ ձեզ զարուն, ձրմեռն յաւէրժ պատէ զան շուքն իմ ցուրտ ճակատ։

Թողէ՛ք յայս վայր ինձ միայնոյ նուիրական,
Փակել զաչկունս. աւուրք անցցեն և աշնան.
Ալ ձմերայնոյն հողմունք ուժգին թէ անդէն,
Ի խոր քնոյս ըզծերունիս զարթուցեն.
Ի յելս Արիւոյն լերինք ապիտակ խառն ընդ կարմիր մինչ շողան,
Յայն երբ աչկունքս ողջունեսցեն զԱրևելեան տեսարան.
Ցի՜ւ յայնժամ և դուք ինուսագ գեղաւոր,
Ողջունէիք ըզժամանակս ալևոր։

Յոյն

ԱՌ ԺԱՄԱՆԱԿՆ

Խուն ինչ այլ ևս մնաչի՛ր արթուն...
Նա աչակից յաւէրժ անքուն
պատկեմ՝ ի գլուխս
Ի փունջ վարդից քաղցրաբոյր։
Թմբիր յաչացդ այն ինչ անհետ, զՅոյս ընդ սոցին՝ ի համբոյր.
Գեղաժիժաղ տեսցես հաշտ,
Զընարանիդ քո՝ ի դաշտ։

ԱՌ ԽՄԲԵԱԿՆ

Օ՛ն երգեցէք ճայնիւ հեշտ,
Զալեւորին հրաժեշտ։

ԽՄԲԵԱԿՆ

Սի՛նջ մահատուեր
որոյ թեւովք սեւաթոյր,
Ժամանակին աչկունք

ծածկի՛նդ վարագոյր.
Երբեմն զուարթ
Ա՛էհ ակնարկինք՝ ողջ 'ի սեաւ,
Յայտնեն մեզ արդ
Ըզխրաքին « մնա՛յք բարեաւ »։

ԱՌ ՅՈՅՍ

Օրհնեալ ես Յոյս՝ Ջահ-
եալ յերկնից,
Որ ըսփոփես զսիրտ տրտ-
մալից.
Եւ զտխրանաց խաւար
անլոյս,
Փոխես խնդից 'ի յարշա-
լոյս։
Դու հրաժեշտիս 'ի տը-
խուր ժամէն,
Մեզ խոստանաս ըզդարձ
անդրէն.
Օ՛ուարթ աւուրց յորս
Քեզ ցնծան,

Դրրունք Յարկիս ապ-
պնչական։

Ի Յոյդ անվրթար,
Ժպտեացուք մեք յար։
Օի ուխտեմք մնալ,
Ի գիրկդ հիւրընկալ։
Քև առցուք խրախոյս,
Քև մեք չահալոյս։
Քև առցուք խրախոյս,
Ո՛վ քաղցրիկ մեր Յոյս։

Ե. Մ. ՄԷԼԻՔԵԱՆ

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Ղե՞ն օրերս մեզ օր խնդութեան
Օն եկէք մեք միաբան,
Երբ արդէն եմք բազմած սեղան
Երգենք զարնենք նուագարան։
Կազմենք երգոց ժողով սիրուն
Նուագենք գինիս այս պաղպաջուն,
Ցեսս սիրուն սա փրփուր
Ընկեր դուն ալ լեցուր։

Ը՛ռ, բարձրացուր գինուոյդ բաժակ,
Ահա իմն ալ բա՛ռեկամ.
Զարնենք բաժակ տանք երկար
կեանք,
Սեղանակցաց հազար ամ։
Զուարթութիւն սա կը բերէ,
Գինիս տրխրած ոգիներէ.
Արդիկ կ՚ընէ զուարթ,
Աղէ՜ ընկեր խմէ արդ։
Տեսա՞ր ուրեմն, խնտումերես;
Թախծութենէդ ելար արդ.
Գինիս կ՚ելլէ ուրա՛ապարէզ,
Խրախութեանց կ՚ելլայ զարդ։
Հա՜պա մանուկ լեցուրնորէն,
Սեղանակցաց համօրէն.
Արդ վայել է խնդալ,
Ընկեր պարպէ մէյ մ՚ալ։

——

ՔԱՏՐԻԼ

Ա. ՀԵՒ

ՀԵՌՔ ՀԵՌՔԻ

Դուք մէջէն ես քովէն,
Ընցնինք դիմաց փոխենք տեղ.
Նոյն ճեւով տեղերնիս,
Դառնանք միատեղ։
Ելեծածան մէկ մ'առաջ,
Մէկ մ'ալ ետեւ քայլ փոխենք.
Ապա տանք աջ 'ի յաջ,
Ալոր մը ճեմենք։
Օ՜ն ճեռք ճեռքի բարեկամք,
Ընկեր թեւ տուր շուրջ դառնանք.
Երդ կրկին մեր նախնի,
Ընկերին երթանք։
Ապա ոստոստենք գիրկ գրկի,
Երթանք անդին պարելով.
Եւ դառնանք նոյն ոտքով,
Այնինք քովէ քով։

Բ. ՀԵՒ

Մէկ մը առաջ երկուքնիս,

Մէկ մ՚ալ դառնանք տեղերնիս.
Իսկ այս անգամ դուն ասդին,
Ես դիմաց անցնիմ։
Մէկ մը աչ երթանք հիմակ,
Մէկ մ՚ալ եռքը դէպ 'ի ձախ.
Ասկէ մեր տեղն ընթանանք,
Ջուարթ կայթենք և ուրախ։
Ալեծածան մէկ մ՚առաջ,
Մէկ մ՚ալ եռև քայլ փոխենք.
Հիմայ ալ տանք աչ 'ի յաջ,
Պոր մը ճեմենք։
Զորաս ալ արդ առաջ խաղանք,
Արկին տեղերնիս դառնանք.
Յետոյ փոխան 'ի փոխ անցնինք,
Դիմացը կայնինք։

Գ. ՀԵՒ

Քալենք հիմայ դէմ դէմի,
Հապա բռնենք թև թևի.
Յետոյ մէկ մ՚ասդին դառնանք,
Մէկ մին ալ անդին։
Մէկ մը յառաջ դէմ դէմի,

Պարենք երկուքս ու դառնանք.
Մէկ մ՚ալ պարենք նոյն ձևով,
Երթանք ընկերնուս քով։
Կազմենք շղթայ չորսերնիս,
Մէկ հոս մէկ հոն ծածանինք.
Ապա ամենայն ընկեր,
Դիմացի կողմն անցնինք։
Ձորաս ալ արդ առաջ խաղանք,
Արկին տեղերնիս դառնանք.
Յետոյ փոխն ՚ի փոխ անցնինք,
Դիմացը կայնինք։

Դ. ԶԵՒ

Դէպ ՚ի առաջ քով քովի՝,
Իմակ երթանք դառնանք մերովի
Յետոյ մէկ մ՚ալ հոն անցնինք,
Դուն հոն ես հոս զատուինք։
Արդ ես մինակ վազեմ ճեմեմ,
Մէկ ուռք մը հոս մէկ հոն նետեմ.
Այթեմ ոստնում զերթ մ՚ուրախ,
Ըլլայ հանդէս ուրախ։
Արդ նոյն քայլով յիս եկէք,

Երեքդ մէյ մ՚եռև գացէք.
Արկին ամէնդ դէպ ինձի,
Յետոյ նոյնպէս դէպ ետի։
Զորաս կէս կլոր արդ դառնանք,
Յետոյ քիչ մը հեռանանք.
Նոքն ալ ասկէ հոն անցնինք,
Մեր բուն տեղիկը կայնինք։

Ե. 2Ե.

Իմակ ալ առաջ քով քովի,
Երթանք դառնանք մերովի.
Յետոյ մէկ մ՚ալ հոն անցնինք,
Ոն հոս բաժնուինք։
Ալեծաձան մէկ մ՚առաջ,
Մէկ մ՚ալ եռև քայլ փոխենք.
Իմայ ալ տանք 'աջ 'ի յաջ,
Պոր մը ճեմենք։
Ընկերք իրար քալեցէք,
Ոս եկէք մէկ մը դարձէք.
Մենք ալ ընկեր ընդ ընկեր,
Յետոյ օտարն երթայ ետ։
Զորաս ալ արդ առաջ խաղանք,

Արկին տեղերնիս դառնանք.
Յետոյ փոխն 'ի փոխ անցնինք,
'Դիմացը կայնինք։

Զ. ՀԵՒ

Ընցնինք երթանք շիտակ առաջ ամենքնիս,
'Դառնանք դիմենք այր և ընկեր տեղերնիս.
Թև թև դէմ դէմ երկանաքար դարձնենք,
Փոխենք ձեռքեր այս կողմ ալ շուրջենք։
Ձեռք ձեռքտանք ընկեր թև տուր շուրջ դառնանք,
Հապա ոտոտենք դիրկ գրկի հոն անցնինք.
Ընկէ դարձեալ մեր ընկերին քովը երթանք,
Յետոյ նոյն ոտքով պարելով ետ քաշուինք։

Գ. ՀԱՓՐԱՍՏՃԵԱՆ.

Ի ՀԱՆԳԷՍ

Ա. ՏԱՐԵԳԱՐՁԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Երթնցի՛ր ո՛ Հայ, Նոր արշալուսով,
Տե՛ս ծագումն արփւոյն պայծառ ե-
ռեսով.
Դարձած տարեւորդուարթ շրջանէն,
Դայ պանծալ Հայոց վեհ բաղդին
վրան։
Պճնել զճակատ Սահմանադրու-
թեան,
Ի փառս սիրատենչ Հայ ոդւոյն վը-
սեմ.
Կեցցէ՞ Մխիթեան Սիրոյ կեն-
սատուն,
Կեցցէ՞ Ազգային Սահմանադ-
րութիւն։
Եւ Երեւելեան խրախճանաց Ընար,
Բաղխէ կնոնտոցդ՝ Իթել սիրահար.

Ճշմարիտ Հայուն շրթանց հետ
երգել,
Օրս մեծ տարեդարձ օրէնադրու-
թեան։
Ազգային աղատ Սահմանադրու-
թեան,
Հանի՛ արձագանքդ Հարցրդ գե-
ղեցիկ։
Կեցցէ՛ Մխիթեան Սիրոյ կենա-
սատուն,
Կեցցէ՛ Ազգային Սահմանադ-
րութիւն։
Ո՞ր Հայ մոռնալով յիշատակդ ար-
դար։
Կնայ ուրանալ պարգևներդ հա-
զար,
Դո՛ւ լոկ մխիթար Հայ սրտից տը-
խուր,
Դո՛ւ Ազատութեան սկիզբն և
պաշտպան։
Իրաւանց ծորան, Սիրոյ կերպարան,

Օրէնք Ազգութեան Սահման երկ-
նաւուր.

Կեցցէ՛ Միութեան, Սիրոյ կեն-
սատուն,

Կեցցէ՛ Ազգային Սահմանադ-
րութիւն:

Ընութեան ամենէն գեղեցիկ ամիս,
Ծնաւ քեզ անձկով ծաղկապսակ
Մայիս.

Օրօրոցի մէջ ամբողջ մէկ տարի,
Լացի՛ր կզկզալով դառն հողմոց
բերան:

Բայց զգուելով ձեռք Ազգասիրա-
կան,

Հասուցինփառաց աւուրս ոսնելի.

Կեցցէ՛ Միութեան, Սիրոյ կեն-
սատուն,

Կեցցէ՛ Ազգային Սահմանադ-
րութիւն:

Երդ՝իրաց մեզմէ սև թշնամութիւն,
Մերձենամք՝ի պերճ Սահմանադ-
րութիւն.

Տալ սիրոյ համբոյր ճակտին Հայ-
կազնեան,
Եւ 'ի փառս Ազգիս, Հայրենեաց
միակ։
Ուխտել միշտ մնալ ազատ թեւին
տակ,
Մաղթել կալ հաստատ մինչ աւ-
ուրց վախճան.
Կեցցէ՛ Մխիթեան, Սիրոյ կեն-
սատուն,
Կեցցէ՛ Ազգային Սահմանադ-
րութիւն։
Օ՛ն հապա եղբարք Սահմանադ-
րական,
Պարենք թեւ 'ի թեւ մէկ սիրտ մէկ
բերան.
Եւ դու զա՛րկ սիրոյ թելերդ ո՛.քնաբ,
Որ երբեմն տխուր հեծէիր ցաւոք։
Օ՛ն ազատութիւն. ցնծութեան
փառաք,
Երդէ՛ քաղցրանուագ մեզ հետ
ծափահար.

Կեցցէ՛ Ազգային Սահմանադրութիւն,
Ի շնորհս ՕՍՄԱՆԵԱՆ պետութեան արթուն։

Ն. Ս. ՄԷԶՊՈՒՐԵԱՆ

Ի ՔԵԶ ԱՆԿԱՅ ՀԱՅԱՍՏԱՆ

Ի քեզ անկայ Հայաստան,
Ի քեզ մընամ Հայաստան.
Ապրիմ մեռնիմ քեզ համար,
Ընձս ու հոգիս տամ յօժար։

Է՛քս բացի չբացի, զքեզ Հայաստան ես տեսայ,
Դեռ իմ երես ծաղր չեկած, ես ողբացի քո վերայ.
Լաց և ցաւեր, վիշտ սաստիկ, զիս պատեցին չորս դիէն,
Եւ Հայաստան գոչեցի, աւերակաց առի ձէն։

Մայրս ծընաւ զիս 'ի ցաւ,

Ահա յաւերակաց լացաւ.
Բերկրանք և մի ոչ տեսի,
Երբ Հայաստան զքեզ տեսի։
Ա՛խ Հայաստան, Հայաստան,
Ընուանդ մեռնիմ Հայաստան.
Երբեմն բերկրանք ցնծութիւն։
Այժմիկ անկեալ կաս զընդան։
Սրտիս սիրով կարօտիմ, մատաղ
լինիմ քո հոգւոյդ,
Որ զիս ծնար մնուցեր և հաներ
քաղցրիկ ծոցոյդ.
Այլ ես զքեզ միշտ լացի
Եւ յաւիտեան պիտի լամ։
Հոգիս հոգւոյդ փոխարէն,
Տամ նազելի Հայաստան.
Դմ Հայրենի Հայաստան, ինձ ոչ
երբէք դու զուարթ
Երևեցար միշտ անփառք՝ գետնին
եղած հաւասար հարթ.
Ինչ աչք տեսաւ չարտասուեց, քո
հին աւուրց աւերակ,

Ինչ սիրտ չզգաց քո շէն անշէն ա-
պարանք։

Աչքս թարթեմ, արցունք
թափեմ,
Աղի ջրով հողդ թացեմ.
Մինչև մեռնիմ տապան
մընամ,
Ողբերգեօքս ողբամ ու լամ։

Ի քեզ անկայ ես յարգանդէ մոր
իմոյ,
Սէր քո սաստիկ զիս տագնապէ 'ի
ցաւ քո.
Օտար երկիր եմ տեսած. 'ի յա-
ւերակս քո ծնայ,
Նուիրական արիւնուս հողոյդ վե-
րայ զարդացայ։

Տուն Աստուծոյ Հայաստան,
Ո՞ւր քո անուն հոգիս եհան.
Հայոց պարծանք քաջաց մայր,
Այժմիկ ունայն և զրկեալ։

Երդնում 'ի Հայկ'ի Մասիս թէ դու
փուրթով նորոգիս,

Շարժէ ուրեմն և շարժիր, արի
վեր կաց զօրացիր.
Սիրեմ զքեզ Հայ անուն, ազանց
քաջաց պանծալի,
Դու Աստուծոյ սիրելի, ազգի մարդ-
կան ցանկալի։
Նհաս ահա դար խաղաղ,
Ուերակներդ կանգնին վաղ.
Որդիքդ լինին լուսաւոր,
Նա զքեզ առնեն փառաւոր։

ԱՒԵՏԱՒԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՌ
ՀԱՅ ՏՂԱՅ

Թոռած Մասեաց մառախլապատ
երկինքէն,
Հրաւէր կարդայ ազատութեան
Հայրենեաց.
Աղխ անդին թափառական Հա-
յերուն,

Զայն աւետեաց Հայաստանի բերանէն։
Ողջո՛յն կուտայ Հայոց, ողջո՛յն նոր փառաց,
Հերիք կըսէ այսչափ հարիւր տարուան քուն։

Օն ա՛չք,
Մեր Հայրենեաց հրաւիրակին.
Ակա՛նջ,
Օն պատգամ է այս երկնային։
Ըրթնուլթի՛ւն արդ պանդուխտ Հայեր,
Հասաւ կանցնի Հայոց օրեր.
Ուէ՛ք ողջոյնս ազատութեան,
Ողջո՛յն սիրոյ եղբայրութեան.
Վե՛րջ վիճակի դերութեան ձեր,
Յերկնից Հայոց այս է պատուէր։
Դարերէ՝ի վեր արիւն արցունքով,
Թռաւ Հայրենեաց քաղցր աւերակներ.
Թռչող հրեշտակն ալ ահա՝ ինձ ընկեր,

Վ՝կայ է խօսքիս խնդում երեսով։
Հրեշտ, Այո՝ այո՝ Հայ տղաք,
Վ՝կայ ես ձեր հրեշտակ։
Հայաստանինոր գարնան,
Ծաղկունքն ահա՛ ձեզ
կուտամ։

Օ՛ն արդ քորք և եղբարք որդիք
դիւցազանց,
Հետ թռչներ գարնան գեղ դայ-
լայլիկով։
Սուրանք փոյթ՝ գիրկ հայրենի փա-
ռաց,
Հոս թողունք հոս։
Վ՝ատթար սրտեր,
Հետ առնունք սէր։
Հոս թողունք հոս,
Ատելութիւն։
Ոտին Հայուն,
Հոս թողունք հոս։
Ազգերնիս մէկ, լեզունիս մէկ,
հաւատքնիս մէկ,

Հայրենիք մէկ, հայրերնիս մէկ,
փառքերնիս մէկ.
Ինչո՞ւ չըլլայ սրտերնիս մէկ։
Եւ ա՛րդ հոս՝ի սև կրից զինաթափ,
Ամենքս ալ հաւասար Հայ եղբայր.
Ամեր զէնքը խաչն՝ի կուրծս վառ՝ի
վառ,
Օն զհետ հրեշտակիս ծաի՝ի ծաի։
Զարնենք տաւիղ ոսկի քնար,
Սրբե՛նք դառն ցաւի աչեր.
Աշխոյժ՝ի սիրտ, ձա՛յն վար ու վեր,
Ապրի Հայոց Աւետաբեր։
Ուրախութիւն այս Հայոց դար.
Օն պար խաղ
Մէն մ՚ի ձախ.
Մէն մ՚ի յաջ,
Նա յառաջ,
Ուրախութիւն այս Հայոց դար։

ՆԵՐՍԷՍ ՄԷԶՊՈՒՐԵԱՆ

Ի ԲԱՐԵԲԱՍՏԻԿ ՎԵՐԱԴԱՐՁՆ

ՎԵՀԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆ

ԱՊՏԻԻԼ ԱԶԻԶ

ԱՐՔԱՅԻՆ

ՀԱՅԵՐԷՆ

Տանն Օսմանեան արև պայծառ,
Մեր Շահնշահ Արքայն արդար.
Դայ հասանէ զուարթ դիմաք՝
Յիւրն'ի յաթոռ բազմիլ փառաք՝:
Ընդրէն դարձին թագաւորիս,
Օրհներկրառիթ նաւակատիս՝
Ելիք ալեաց խրախոյս կարդան,
Մեզ աւետեն կարկաչաձայն:

Յորդորակ

Դուռան թնթանօթք, փայլակին վառօդք,
Բարեհեն անիւք, կարկաչեն ալիք,
Ինչէ փող սրինդ, որոտան լերինք:

Հեղեակ

Հէվքէթլու Սուլթան Ազիզ
Ազիզ խան,
Կեցցէ՛ի զահունփառք մշանչեան։
Ընտառացան սունք զօրաց,
Բանակ ստուար քաջ զինուորաց.
Աւարդանին վսեմափայլ՝
Յոսկեճամուկ համազգեստեալ,
Թափօրակապ և խմբոլին՝
Օծոմեզերը զան զումարին,
Սիրտք՝ի թնդոջ աչկունք՝ի ծով,
Օտուք Աստուծոյ փարել անձկով։

Յորդորակ

Ելէք ընդ առաջ Ինքնակալիս քաջ,
Աստուծոյ՝ արքունեաց
կաճառ
Օտէր մեր բարեփառ ածէք յիւր
տաճար։

Հեղեակ

Հէվքէթլու . . .

Երգեաց Ա. Յ. Յորինեաց Յ. Ս. Ս.

Բարձրացո՛ Տէր 'ի յերկրի զփառս Օսմանեան,
Զօրաստատիտ մեր իշխան
Պահեա որպէս բիբ ական։
Պաշտպանեա զմեզ ընդ բազկաւ Ար-
քայիս զթած,
Ինքնակալ մեր Վեհափառ
Կեցցէ՛ 'ի գահուն բարեփառ։

Յորդորակ

ԱՊՏԻՒԼ ԱԶԻԶ ԽԱՆ արքայ բարե-
խնամ.
Պատկ Օսմանեան հզօր Պետու-
թեան։
Հատու արա Տէր՝ զսորին սուսեր,
Բազուկ թշնամւոյն եղիցի նկուն։

Յորինեաց Յ. Ս. Ս. Նրբեաց Ա. Յ.

ՏԱՃԿԵՐԷՆ

Պիր թագըմ սատէ եիւրէք մուսա-
սուն փաքի սիւպեան,
Տէր ինամէնէ կէլտին տէյէրէք
եա՞ Բահման.

Օլոռ ատի իլէ ալէմ հէմէ Միլ-
լէթ սէրպէսթ,
Պու նէ՛ ինսաֆ վէ նէ՛ նիյմէթ վէ
նէ՛ լութֆ ու ինայէթ։
Սիւն կիպի տօղտուղու ան հիւանիւ
միւրվէթքեանլն,
Ա՛էրտի ֆէրմանը իլէ ճիւմլէ սէ-
ղիմէ տէրման։
Ն՛օմրիւնի շէվքէթինի պի ատէտ
իյլէ եա Բապպ,
Տինեա տուրտուգճա, տուրա Տէվ-
լէթի Ալի—Օսման։

Ն՛ափարմ

Նէզտանի սիւալհան
Սէն իյլէ իհսան,
Նաշասլն պինլէր
ԱՊՏԻԻԼ ԱԶԻԶ ԽԱՆ

Յօրէնէաց Գ. Ն. Նէրէաց Ա.Յ.

Ֆամտուսէնա օլնիւտայի զատիրէ,
Գի սէմատէն լութֆ իյլէտի ալէմ։

Օ՛իատարիէնտէր ճիհանքէրէմրիզ,
Թաճիտարիտուլթան ԱՊՏԻԼԱԶԻԶ ԽԱՆ։
Շէհի իգպայլ իլէ ատալէթ քեարի,
Օլսուն սէրիր սալթանաթտէ էյ-
եամի.
Վի իտուպ պէնտի շէֆաաթլէ
գուլլէրի,
Բայէթ իտէր մէշագգաթտէն հէր
պիրի։
Էյ շակիրտան քեաֆֆէմիզտէն
եէք տիհան,
Հագգ ազիզէ շուքր իտէլիմ պի
փայան.
Գուլսրն հիանիւ նազար իլէ ֆիրա-
վան,
Պէյլէ եէվմի ֆիւրուզայի ատայէան։
Ն՝ափարն
Ամրանիյէթ պահշէնտէյի հագգ
ճէլիլ,
Շահրմրզրն իթսիւն էօմրիւնիւ
թավիլ։

Յուլինեաց Կ. Փ. Նէրսէեաց Ա. Յ.

Նուրու ֆէրրի միհրումահըն,
Բույի մալի խաքի բահըն.
Էյ Շահինշահի քէրէմքեար,
Սառէլէթ տիր պարի կեահըն։
Օլտու կէօնիւլլեր քիւշատէ,
Խալքի ալէմ հէրի սէֆատէ.
Օէյպ ու զինէթին կէօրիւրլեր,
Սայէյի պէհձէտ ֆէզատէ։
Բազս խոէր կէօքտէ մէլէքլեր,
Միւսթէճապ օլտու տիլէքլեր.
Իշպու տէվրի նէվզուհիրի,
Կէօրմէմիշ չէշմի ֆէլէքլեր։
Էյ շէհի սահիպ ալթայա,
Տաղհերի թէվֆիքի ալեա.
Խոէր պիր բուզըն հէզար սալ,
Նումնիլէ հազրէթի Մէվլա։

Նստարան

Պուլտու տէվրի էմնիւ էման
Սայէյի լութֆունա ճիհան։

Յորդորակ

Էյ խիւտավէնտի ճիհան,

Ա՜խ, շէհին շահի դէմանս.
Էրմէնիյան Մէլէթի,
Լութֆուն իլէ շատիւման։
Նաղմէ յայի խոշ նէվա,
Ամշիւ պիւլպիւլ տէր հավա.
Փիւր թէրէննիւմ իյլէմէք,
Ըրըզու էթտիք Շահա։
Ա՛նի ալէմին սանա,
Ա՛նրմրզ օլսուն ֆէտա.
Ամանիւ էնզարրն պիզէ,
Քիմիայի պի պէհա։

Յովհաննէս Ամ. Գ. Երէցոց Ա. Յ.

ԵՐԳՔ

Գ. ՏԱՐԵԳԱՐԶՈՒ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ

ԱԶԳԱՑԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

ԹԱՄ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Ամիտ ծաղկեալ՝ի ծոց լերանց,
Գողտրիկ պատկեր իմ Այրենեաց.

Երրորդ անգամ սիրոյ նուագ.
Քեզ գայ ձօնել Հայ պատանեակ։
Օ՜ն Երգեցէ՛ք Հայկեան զուարթունք,
Սիրոյ է ժամն, դադրին արցունք։
Հրեշտակն Հայոց յերկնից սլանայ,
Նայուածքներէն ժըպիտ շողայ.
Եւ այն ժպտէն վերականգնին,
Համր աւերակք Հայաստանին։
Հայկեան կուսանք օ՜ն փութացէք,
Նորածին վարդըս սիրեցէ՛ք։
Փայլուն աստղեր ահա՛ շողան,
Երբ հաշտութեան երկնից նըշան.
Հայկեան փառաց՝ նոր զարդարել,
Հայկեան քընար՝ նոր երգք տաւղել։
Հայ պատանիք օ՜ն ձայնեցէ՛ք,
Գողտրիկ ձայնով ՕՐՆ օրհնեցէ՛ք։
Ահ Հայրենիք ալ թո՛ղ չի լան,
Մասեաց սարեր արձագանգ տան.

Ու Եփրատէս, Տիգրիս գետեր,
Ո՛ւր կան թողուած քաջաց ոսկերք.
Այ ծերունիք վիշտք ձեր մոռցէ՛ք,
Մանկանցդ ճակտէն ըզ յոյս տեսէ՛ք։

ԱԲՐԱՀԱՄ Ց. ԱՑՎԱՋԵԱՆ

Փարատեցաւ երկնից կապոյտ,
Ակն անմահին ակնարկեաց.
Յառին Այկայ սերունդք ընդ փոյթ
Ընչել նուագս օրհնութեանց։

Խրախոյս Այկազունք.
Յաւէրժ փրկութիւն,
Օ՜ն երգենք, մանկունք,
Սահմանադրութիւն։

Ժամանակին 'ի խոր յատակ
Արցունքն Այոց սուզեցան,
Լռեաց ողբոց դառն աղաղակ
Սրգոյ ծիծաղն աստ փոխան։

Խրախոյս . . .
Ամէն էին արտեր թափուր,

Հ՛ակատն՝ յամօթ ազգութեան.
Քա՛ւ. նուազեալ ժայթքեաց հուր,
Ընդոյսք յանկարծ ՀԱՅՔ յարեան։
Խրախոյս . . .

Որ՝ի կամարն աստեղազարդ,
ՀԶՕՐ բանիս ինքնիշխան.
Մեզ տուողին շնորհացն առատ,
Ղաւուրս Հայցեմք տուր երկայն։

Խորին մաղթանաց,
Ուղերձ միաձայն.
Ար պետն Օսմանեանց,
Ապտիւլ Ազիզ Խան։

Նրէթ՝ի դիմաց
Ա. ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏՊԱՐԱՆԻ

ԵՐԳ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ
ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Նրզ սիրոյ, երզ ՀԱՅՐԵՆԻ, քեզ կու-
ղուի ՀԱ՛ՅԱՍՏԱՆ,

Հոն, ուր Հայք ամէնդիէ մի հաւ-
զուէր կը խայտան.
Այն երկնից դատաւորՔիս դառն
անէծք հընդդարեան,
Դադրեցաւ ըսե՞նք արդեօք թէ՝
մեր մեղաց չափ լրցան։
Զայն տուր ըսէ Հայաստան,
Նախնեաց մեր տուրբ օթեւան.
Արդիւնթեան կրկին օրրան,
Ա կայդ երկնից հաշտութեան։
Ծոեր, տղայ, երիտասարդ. հա-
ղուստ աղքատ անխտիր,
Օրիորդ մատաղերամ ամենքն ան-
կեղծ անպատիր.
Ամենուն մի է արիւն ամենքն ունին
մէկ երկիր,
Երանեայ Ճորն հաւզուած կարծես
թէ չեն տարադիր։
Զայն տուր ըսէ . . .
Բայց՝ սիրո՞ ըսենք արդեօք, թէ
աշնանն հողմոց ալէս,

Մէկ մ՚ասկէ մէկ մ՚ալ անկէ փչող
կոյտ մ՚է աս հանդէ՞ս.
Ո՞հ ... չէ՛, չէ, Հայրենիսէրն է շար-
ժառիթ պարզապէս,
Որ եղբայր եղբօր դիմած սուրը սրբ-
տով կուգան ՚ի տես։
Ամիսիթարուէ Հայաստան,
Նախնեաց մեր սուրբ օթևան.
Արդկութեան կրկին օրրան,
Ա կայդ երկնից հաշտութեան։
Նախնի՛ վեհ, գրլուխ բարձէք ձեր
փոշեէից տապանէն,
Ու տեսէք Հայերն ի՛նչպէս զիրար
եղբայր կ՚ողջունեն.
Դիւցազուն իրենց նախնեաց՝ յիշա-
տակաւ սիրտ ամէն,
Ելցեալ, ՚ի Էր անբաժին և միու-
թիւն սերտ կ՚ուխտեն։
Հապա հրճուէ Հայաստան,
Նախնեաց մեր սուրբ օթևան.
Արդկութեան կրկին օրրան,

Ա՛կայդ երկնից հաշտութեան։
Բարձրացան յերկինս 'ի վեր ձայն
կռկռանաց Հայորդւոյն,
Բարձունքէն դիտեց տեսաւ ան-
նիրհ աչաց Տէրն արթուն.
Դպտեցան դէպ 'ի երկիրն որ նախ-
օրրանն էր մարդուն,
Ոյցելուն անմիջապէս խրրկեց Սէրն
իր զուարթուն։
Խայտա խնտա Հայաստան,
'Նախնեաց մեր սուրբ օթեւան.
Ո՞արդկութեան կրկին օրրան,
Ա՛կայդ երկնից հաշտութեան։

Ա. ՃԷՎԱՀԻՐՃԵԱՆ

ԵՔԵ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՅԱՐԵԴԱՐՁԻ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Նկաւ ժամանակ բարեկամ բաղդին՝
'Նոր գարուն բերաւ Հայաստան
երկրին,

Ելաւ յԱբրահամ՝ հաւաւ 'ի Տիգրիս,
Դարձաւ դադրեցաւ կեցաւ 'ի Մաս-
սիս։

Եւ ձայն տուաւ անկէ Հայոց,
Ձայն մի Թորգոմայ որդւոց։
Որ մերկանան զցուրտ ձմռան վա-
ղարագոյր,

Ժամ է արդ Հայեր
Ընկեր առ ընկեր
Տամք Սիրոյ համբոյր։
Համբոյր մեր ըլլայ վկայ միութեան
Սահմանադրութեան։
Եւ շինելաւիտառ Հայրենեաց խորան,
Բացաւ տխրագին զեւր քոյ ճրագ-
նութեան,
Հասին հոն Մուսայք, և Յուսոյ
հրեշտակ,
Ուխտեցին խնդութեան նուա-
գ։

Եւ սիրտ տուին անկէ Հայոց,
Սիրտ մի Թորգոմայ որդւոց։

Որ մերկանան հեռնախանձու վա-
րագոյը,
Դամ է արդ Հայեր,
Ընկեր առ ընկեր,
Ցամք Սիրոյ համբոյը։
Համբոյը մեր ըլլայ մեր ուխտ մի-
ութեան
Սահմանադրութեան։
Ելաւ Հայաստան նոր գարնան 'ի
տես,
Դարձա'ի շքեղիւր փառաց հան-
դէս,
Դարձիր բաղդակոծ Ինարդ իմ
հոգւոյն,
Դարձէք աւուրք կենաց, դարձէք
յայդ յուսոյն։
Եւ լոյս տուէք անկէ Հայոց,
Լոյս մի Թորգոմայ որդւոց։
Որ մերկանան մութ գիշերին վա-
րագոյը,
Դամ է արդ Հայեր,

Ընկեր առ ընկեր,
Ցամք Սիրոյ Հաւրոյր։
Հաւրոյր մեր ըլլայ կնիք միութեան
Սահմանադրութեան։

— Ս. Հ. ՓԷԼԷԿԵԱՆ

ԵՐԳ ՄԻՈՒԹԵԱՆ

Եղբա՛յր, մինչև ե՞րբ այսպէս
լուռ տրխուր,
Օրերթ թշուառ պանդուխտ հե-
ծեծես վի՛շտ, վի՛շտ.
Սէ՞րն ու գո՞ւթ Ազգիդ խանձէ
սիրտըդ միշտ.
Դիտե՛մ... արդ ցրուէ ցաւդ. զու-
արթ օ՛ն ձեռքդ ինձ տուր,
Ա՛ռ քեզ՝նոր ողջոյն Սահմանադ-
րութիւն.
Որ շնորհեց Հայուն թուական
վաթսուն։
Սիրենք Ազգութեան կեանքն
ու միութիւն,
Սիրենք, որ՝ապրի Սահմանադ-
րութիւն։

Այն անմահ օրն երբ մեր սրտե-
րուն մէջ,
Սահմանադրութեան ոգին արձարձեց.
Եւ մինչև դաշտերն անոր փառքն
երգեց,
Ծեր, երիտասարդ, մանկտին յել
և էջ.
Այլ ո՞ր չազգի ձեռք դիմէ զայն
ջնջել,
Հայուն աւերմանն անգութ, անտարբեր։

Սիրենք Ազգութեան...

Հերիք չէ՞ լուսոյ դէմ ապրիլ զերթ
կոյր,
Ընտե՛ս Ս. արչութեան Ազգի մը
թշուառ.
Համազգի անուամբ պառակտել ի-
ւար,
Իրաւանց ձայնին դէմ՝ մընալ միշտ
խուլ,

Տեսնել սա դարուն փոյթն, ընթացքն յառաջ,
Դեռ բիրտ կամաց հետ յամել անամաչ։

Սիրենք Ազգութեան...
Մոռնա՛նք երեկուան ոխն ատելութիւն,
Մերժելով վերէժն պաշտենք Ազգի Սէր,
Արին ՝այ սրտէն սև կերրից բոցեր,
Գիրկընդխառն, համբոյր, և ուխտ հաշտութեան,
Ի վառս մեր յուսոյն Սահմանադրութեան,
Որ՝ պաշտպանէ՝ մեր հաւատքն, Ազգութիւն։

Սիրենք Ազգութեան...
՝Երիք չէ՞, որ ծաղը ըլլանք օտարին,
Ուշ չէ՝, որ կզգանք Ազգութեան պարտքեր։
Երկինք ձայն կուտայ, մենք դեռ չենք լսեր,

Այլ վերէ՞ժ ձայնենք եղբօր ական-
ջին,
Մէկ արեան կաթիլ, ծնունդ մէկ
հայրենեաց,
Ձ՚ուզենք հնազանդիլ Ազգիս Օրի-
նաց։

Սիրենք ազգութեան . . .
Ա՚կա՛յեն մեզի մօտ օրերն անցեալ,
Թէ քանիանգամ ազգի բաժանում,
Հայ երակներու մէջ լեցուց դառն
արիւն,
Փորձուածը կրկին փորձողն է յի-
մար.
Օ՛ն, սրբենք այն խորթ աւուրց ա-
ղտաներ,
Որ մեր ազգութեան տունն ու տե-
ղին աւրեր։

Սիրենք ազգութեան . . .
Ամուսած Հայութիւնն աշխարհի
վերան,
Որոշ ժողովուրդ մ՚ազգի անունով.

Ընտրեց՝, որ կ'ապրէր ազատ օրէն-
քով
Իրեն ազգութեանն յարմար և
պատկան,
Եւ՝ զոր բաղդ դողցուց դըժխեմ
ձեռքերուն,
Պէտք չէ՞ արդ անոր տալ կենդա-
նութիւն։
Սիրենք ազգութեան . . .
Միլիոնաւոր Հայ ձեռքն 'ի ծնօտ
մինչ ցարդ,
Կապաւուէր միակ Սահմանադրու-
թեան.
Ողջոյն տալ դարձեալ և երրորդ ան-
գամ,
Սիրելով անոր սկզբունքն հաստատ.
Արդ ուրախութի՛ւն, անցաւ փոր-
թորիկ,
Որ սպառնացաւ անձրևել սաստիկ։
Սիրե՛նք ազգութեան . . .
Մինչև երկնից տակ ապրի ազգու-
թիւն,

Ճշմարիտ Հայերն օրհնեն յաւիտ-
եան.
Հազար ուրմն հարիւր վաթսուն
թուական,
Ուր սովրեցաւ մեր ազգին Վարչու-
թիւն
Օրինօք գործել և հաստատ հիման
Վրայ զետեղել Հայ պարտուց
պայման։

Սիրենք ազգութեան...

Օ՛ն արդ, ո՛վ Հայ Աղեր, աւուրն
ականջ տուր,
Հաւատոյ դրօշակ ձեռքդ և սուրբ
խաչն յոյս,
Սիրոյ խոստումներ քանդակածի
կուրծքս.
Քարոզէ ժողովուրդդ որ գընայ
յառաջ,
Ձեռք տուր ազգային բարեկար-
գութեան,
Գիտցի՛ր, որ պաշտօնդ է պարտք
արբազան։

Սիրէ՛ ազգութեան . . .

Ազնուական Հայ լսէ՛ ժողովուրդին
Որ պատրաստ յարդել քեզ միշտ
իբրև Հայր .
Եկո՛ւր ազգութեան մէջ ըլլանք
եղբայր ,
Զայնակցէ՛, ո՛վ մեծդ , փոքրերուն
ձայնին ,
Հոն է քու պատիւդ , հոն քոյդ
ճոխութիւն ,
Որ պատմութեան մէջ տան ան-
մահութիւն :

Սիրէ՛ ազգութեան . . .

Հայ երիտասարդք ցրուենք այն
խորհուրդ ,
Որ մեր դաշտին մէջ սերմանե-
ցին շուտ .
Ապագան այնպէս բարօրենքի փոյթ,
Ուր չար դրացիներ չըզտնեն յա-
գուրդ .
Ակէց ալ յարմար օր կըլլա՞յ Հա-
յուն ,

Ո՛անչնալ Իրաւունք, Օրէնք, Ազ-
գութիւն։
Սիրենք ազգութեան . . .
Մարդկութեան պարտքը հոս կու-
զէ օրհնել,

ՎԵՀԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏԻԼ ԱԶԻԶ ԽԱՆ

Ընքայն Օսմանեան հըզօր Տէրու-
թեան
Որ է փառք Ազգին և ինքնազօր
Տէր.
Գովենք, որ շնորհեց Սահմանադ-
րութիւն,
Իր հաւատարիմ հպատակ ՝ այուն։
Սիրենք ազգութեան . . . ։

ՆԵՐՍԷՍ ՄԷԶՊՈՒՐԵԱՆ

Շ՛ան ու շէվքէթիյլէ հէր ան,
Թաղ՛ը Շ՛ահի օլա՝ փէրհան,
Պէօյլէ ըսլաս իլէ հէր կիւն,
Օլուր էվլատը պէնտէկեան։
Ապտ—Իւլ—Ազիզ . . .

Մաքուէմինէ սէնին Շահա,
Ձիհանի իյլէտին իհեա.
Իշթէ միլլէթճէ եէկզէպան,
Ինթմէքուէյիզ շիւքրին իյփա։
Ապո—Իվ—Ազիզ ...
Գըլուպ օլ տավէրի սէյյիտ,
Նիզամը միլլէթի թէճտիտ.
Էման օլ Շահը զիյշանըն,
Օլա հէր բուզե եէվմիեյտ։
Ապո—Իվ—Ազիզ ...

ԵՐԳ ՍԻՐԱՀԱՐ ԵՐԻՑԱՍԱՐԴԱՑ

—Գիշեր ցորեկ կը հառաչեմ ա՞խ օ-
րիորդ քու սիրուդ,
Սև աչքերուդ վարդ այտերուդ
զարնուեցայ ինչ օգուտ.
Աչքերուդ, այտերուդ, և ոսկեթել
մազերուդ,
Միայն քեզի սա կ'աղաչեմ որ ու-
նենաս քիչ մը գութ։
—Գիտես անգութ որ պատանին չի

դիմանար այս ցաւուն,
Քեզի համար ալ չի դադրիր աչ-
քիս արցունքն օրն 'ի բուն.
Քեզ միայն կ' յիշեմ թէ քուն ըլ-
լամ թէ արթուն,
Թէ մութ ըլլայ միտքս կուգաս
նոյնպէս և առաւօտուն:
Շատ աղուորներ թէպէտ տեսայ
սիրտս միայն քեզ սիրեց,
Ո՞հ չեմ գիտեր թէ քու սէրդ
սրտիս մէջ ո՛վ արծարծեց.
Ա՞խ քու խաթուն մարիկդ իրեն
փեսայ ո՛վ ընտրեց,
Գերի կ' ըլլամ քու մօրկանդ եթէ
զիս դուրս չի ճլդեց:
—Ո՞ւր էր որ սա աղջիկը ինծի ըլ-
լար ամուսին,
Խիստ երջանիկ Պէյէրու պէս ապ-
րէինք 'ի միասին.
Թոմպուլիկ կլորիկ զաւկներնիս
մեր չորս դին,

Ես ծխէի իմ սիկառս ասղնեղործեր իմ տիկին։
—Քեզի համար թափառական ես սար ու ձոր ընկեր եմ,
Քեզի համար ճըզիկ ճըզիկ ոսկոր ու մորթ եղեր եմ.
Էլ բաւական իս խոցես ահա ոտքդ ինկեր եմ,
Ըսէ ինծի բառ մ՚երջանիկ, թէ ես ալ քեզ կը սիրեմ։

ԵՐԳ ՊԱՐՈՆԻ

Աղջիկ երեսդ իս դարձուր,
Մէկ մ՚ալ սա հալըս հարցուր,
Ես քեզի ի՞նչ եմ ըրեր,
Ինչո՞ւ կը նայիս ծուռ ծուռ։

Աղջիկ

Պարոն զիս ո՞վ կարծեցիր,
Կորսուէ փո՞ւ . . . չես խմինիր,
Դուն ինձ մի սիրահարիր,
Առջևէս շուտ հեռացիր.

Պարոն

Քանի ինձի կ'երևին,
Այն քու սիրուն սև աչքեր.
Նետի նման զիս զարկին,
Սէր ոուի եւ չեմ առներ։
—Աղջիկ տեսայ բիւրաւոր,
Սէջերնին դուն ես աղուոր,
Նա քեզի խիստ մերձաւոր,
Դուն ինձմէ շատ հեռաւոր։
—Դարուն եկաւ գեղեցիկ,
Ծաղիկ ելլեցաւ վոյս ու ծաղիկ.
Նկ քեզի հետ, եկ հոգիս,
Ծաղկինք սիրոմէն իմ սրտիս.
—Թռև ոուր ելլենք դաշտն'ի վեր,
Ծաղկունք բլան մեզ ընկեր,
Ելլենք վարդին քովերը,
Սոխակին հիւ՞՞՞ երգերը։
—Պիտի քաղեմ ա՞ս օր մը,
Այսերէդ շաբ համբոյր մը.
Որ մեր սրտին բացուի դուռ,
Թող մնանէ սէր քաղցրաբոյր.

—Սիրոյ ճաշակն է անուշ,
Բան զվարդին շատ իւր փուշ,
Սակայն հարուած մի յօժար,
Օ՜ելիւռ մ՚է հեշտ զօվարար.
—Որ զբեկեալ ծաղկին ծիղ,
Կենդանածնէ 'ի խնծիղ.
Եկուր քաղցրիկ սիրուհիդ,
Ամբոյր մը սիրահարիդ,
Տուր որ քեզմով առնէ կեանք,
Թէ չէ չունի այլ փրկանք: